


ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 1937 թ.

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե
ԿԱՏԱՐՎՈՒՄ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ



ԳՈՒՏՆԱՑԱՎԱՐ—ՈՐԳՈՒԶՅՈՒ. ՅԵՐԵՎԱՆ 1937

О ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ
Для чего и как она проводится

ԽՆՉԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԽՆՉՊԵՍ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

1937թ. հունվարի 6-ին կուսակցության ու կառավարության վորոշմամբ կատարվելու յեւ համամիութենական մարդահամար :

Այդ որը մեր մեծ հայրենիքի ամբողջ անծայրածիր տարածության վրա ցրվելու յեւ հաշվառուների վիթխարի բանակը : Նրանք մանելու յեն ամեն մի տուն, ամեն մի խոճիթ ու յուրու և ցուցակագրելու ու հաշվելու յեն Խորհրդային Միության ամբողջ բնակչությունն անխտիր, մեծից մինչև փոքրը :

«Աշխարհում յեղած բոլոր արժեքավոր կապիտալներից ամենաարժեքավոր ու ամենավճռող կապիտալը մարդիկ են, կադրերը», — ասում ե մեր մեծ առաջնորդն ու ուսուցիչը, ընկ. ՍՏԱԼԻՆԸ :

Այդ կապիտալը՝ հաշվառելու, ԽՍՀ Միության բնակչության քանակն ու կազմը վորոշելու համար մեկ միլիոնից ավելի հաշվառու և մարդահամարի այլ աշխատողներ են հարկավոր :

Բնդհանուր մարդահամարը մի այնպիսի վիթխարի յերկրում, ինչպես ԽՍՀՄ, — մի բարդ ու շատ պատասխանառու գործ ե : Մեր յերկիրը բոլոր կապիտալիստական յերկրներից տարբերվում ե ծնունդի բարձր մակարդակով . այսպիս, վերջին 12 տարում ԽՍՀ Միության բնակչությունը շատացել ե ավելի քան 30 միլիոն հոգով, վորը կազմում ե Լեհաստանի ամբողջ բնակչության 90 տոկոսը : Բուռն թափով աճում ե քաղաքների բնակչությունը : Որինակ, Մոսկվա քաղաքի բնակչության թիվը 1926 թ. վերջին 2 միլ. 26 հազար եր, իսկ այժմ, 1936 թ., Մոսկվայում յերեք ու կես միլիոնից ավելի բնակիչ ե ապրում :

Ե՛լ ավելի ապշեցուցիչ են մի շաբաթ այլ քաղաքների վերաբերյալ թվերը : Մատլինսկ (նախկ, Կուլնեցկ) քաղ. բնակչությունը

1926 թվի վերջին 4 հայտաբեց պակաս եր, իսկ 1935 թ. հունվարի 1-ին՝ 220 հազար ե:

Հայտնի յե նմանապես, վոր անցած 10 տարվա ընթացքում նոր խոչոր արդյունաբերական քաղաքներ են առաջացել: 1926 թվին գեռ չկար Մալյևտուրոսի քաղաքը, իսկ 1935 թ. հունվարի 1-ին այդ նոր քաղաքում արդեն 210 հազ. բնակիչ կար:

Եւրկրի տնտեսական ու կուլտուրական դեմքն արմատական փոփոխությունների յնինթարկվեց, վորպես ստալինյան յերկու հնդամյակների և սոցիալիզմի վերջնական ու անվերադարձ հաղթանակի հետեւանք. այդ փոփոխություններն եյական կերպով աղքեցին նաև մեր յերկրի բնակչության կազմի վրա: Ամբողջովին ու բոլորովին վերացված են մեր յերկրում շահագործող գառակաբռնությունը: Գյուղացիության գերիշխող մեծամասնությունը կոլտնտեսական և դարձել: Զգալիորեն ավելացել ե բանվոր գառակաբռի թիվը: Խետաքարձուցել ե բնակչության կուլտուրական մակարդակը:

Մի խոսքով, առաջիկա մարդահամարը բնակչության քանակի ու կազմի մասին բոլորովին այլ տեղեկություններ ե տալու, քան անցած 1926 թ. կատարված բնդհանուր մարդահամարը: Ահա թե ինչու ամենալիիթիւարի աշխատանք պետք է կատարվի մի մերժոնից ավելի մարդկանց ուժերով:

ԻՆՉՈՒ ՅԵ ՄԱՐԴԱՀԱՆԱԿԱՐԾ 1937 Թ. ԱԱՏԱՐՎՈՒՄ

Վերջին—1926 թ. մարդահամարից հետո մեր մեծ հայրենիքն անձանաշելլորեն փոխվել է:

Դեռ Համեկ(թ)կ ԽVII համագումարում ընկ. ՍՏԱԼԻՆԸ մի քանի խոսքով ուրվագծեց մեր յերկրի եկոնոմիկայի մեջ տեղի ունեցած փոփոխությունները—

«ԽՍՀՄ . . . հիմքից կերպարանափոխվել ե, դեն շպրտելով իր վրայից հետամնացությունն ու միջնադարը: Նա գյուղատընտեսական յերկրից դարձել ե արդյունաբերական յերկր: Մանր անհատական գյուղատնտեսության յերկրից նա կուեկտիվ խոչոր մեքենացմած գյուղատնտեսության յերկրից ե դարձել: Խավար, անդրադառ ու անկուլտուրական յերկրից նա դարձել ե—ավելի

ճիշտ՝ դառնում ե—որագետ ու կուլտուրական յերկիր, վործածկված ե ԽՍՀՄ ազգությունների լիզուներով գործող բարձրագույն, միջնակարգ ու տարրական դպրոցների վիթխարի ցանցով»:

Հիմնովին վորխվել ե նաև ԽՍՀՄ բնակչության սոցիալական կազմը, փոխվել ե նրա դասակարգությունը՝ կառուցվածքը: Խորհուրդների VIII-րդ արտակարգ համագումարում հանդես գալով, ժողովուրդների մեծ առաջնորդ և ԽՍՀՄ նոր Սահմանադրության հանձնարեղ ստեղծող ընկ. Ստալինն իր պատմական գեկուցման մեջ ասաց —

«Կալվածատերերի գասակարգը, ինչպես հայտնի յե, արդեն վերացված եր քաղաքացիական պատերազմը հաղթականորեն ավարտվելու հետևանքով: Ինչ վերաբերում ե մյուս շահագործող գասակարգերին, ապա նրանք ևս կալվածատերերի դասակարգի քայտին արժանացան: Զիա այլևս կապիտալիստների գասակարգը արդյունաբերության բնագավառում: Զիա այլևս կուրավեների դասակարգը գյուղատնտեսության բնագավառում: Զիա այլևս վաճառականների պատմականներն ու սպեկուլյաններն ապրանքաշրջանառության ասպարեզում: Այսպիսով, բոլոր շահագործող գասակարգերն արդեն վերացված են:

Մնացել ե բանվոր գասակարգը:

Մնացել ե գյուղացիների գասակարգը:

Մնացել ե ինտելիգենցիան»:

Արդեն յերկար տարիներից ի վեր մեր յերկրը չունի, և վոչ մի գործազուրկ մանչափ բարելավվել ե ավելի ու ավելի յե բարելավվում աշխատալորության նյութական դրությունը: «Կյանքին ավելի լավ ե դարձել, կյանքն ավելի ուրախ ե դարձել» (ՍՏԱԼԻՆ):

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում, վոր ձեռք բերվեց ժողովուրդների մեծ առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ, վոչ միայն յերկրի տնտեսական հզորության աճմամբ, այսինքն նրա արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության աճմամբ և արտահայտվում, այլ նաև՝ Խորհրդային Միության հենց բնակչության մեջ կատարված տեղաշարժեցով՝ բնակչության կուտուրական մակարդակի աճմամբ: Մեր



11-2802691

յերկրում համարյա տմբողջովին վերացված և անդրադիտությունը։ Ստեղծված ե դպրոցների, տեխնիկումների, բանֆակների, բարձրագույն դպրոցական հաստատությունների վիթխարի ցանց։

Հետազա սոցիալիստական շինարարության և սոցիալիզմինոր հաղթանակների բոլցեկյան պլանավորման խնդիրները ճշգրիտ տվյալներ են պահանջում Խորհրդային Միության բնակչության թվի ու կազմի մասին։ 1926 թ. մարդահամարի տվյալներն արդեն հնացել են։ Ահա թե ինչու Խորհրդային կառավարությունն ընկ։ Ստալինի նախաձեռնությամբ Համամիութենական նոր մարդահամար և նշանակել։

Համամիութենական մարդահամարը մեզ տալու յե շատ հարուստ նյութ, վորն անհրաժեշտ և սոցիալիստական շինարարության հետազա ամբողջ ընթացքի համար։ Ճշգրիտ տեղեկություններ բանվորների կազմի մասին, կոլտնտեսականների մասին, խորհրդային ինտելիլենցիայի մասին, յերեխաների մասին, —այս բոլորը կողնի սոցիալիստական պետությանը հետազա տնտեսական ու կուլտուրական շինարարությունը պլանավորելու, ԽՍՀՄ պաշտպանունակությունն ել ավելի ամրացնելու, ինչպես նաև՝ բազմիվին ժողովրդի կուլտուրական ու կենցաղային պահանջները բավարարելու գործում։

Պետք ե իմանալ, թե այժմ, 1937 թ. հունվարին ԽՍՀՄ-ում ինչքան տղամարդ ու կին ե ալլուստ, նրանցից քանիսն ե դրադես ու քանիսն անդրագետ, քանի ճարտարագետ (ինժեներ), բժիշկ, ուսուցիչ, ուսանող ու աշակերտ կա։ Սպառիչ տվյալներ են հարկավոր բարձազդի Խորհրդային Միության առանձին ժողովրդների մասին։

Վիճակագրական այդախի տվյալները պետք են թե՛ պլաններ կատարելու համար, թե պետական, տնտեսական, դիտական, կուլտուրական ու հասարակական բոլոր հիմնարկների ու կաղմակերպությունների ընթացքի աշխատանքի համար։ Զի կարելի, որինակ, ասել, թե ինչքան դպրոց ե հարկավոր, յեթե չե հաջած դպրոցական հասակի յերեխաների թիվը։

Վերջապես, և այս գլխավորն ե, — մարդահամարի տվյալներն անհրաժեշտ են յերրորդ հնդամյակի պլանը — կոմունիզմի ուղիղ կատարվելիք հետազա հաղթական առաջխաղացման պլանը մշակելու համար։

ԴՆՁԻ՞ ՄԱՍԻՆ ԵՆ ԽՈՍՈՒՄ ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԹՎԵՐԸ

Շատերը կարծում են, թե վիճակագրական թվերը մի չոր, անձրախի բան են։ Այդ սիալ ե։ Շնորհքով, հմտորեն կարդալու և համեմատելու դեպքում վիճակագրական թվերը տալիս են յերկրի տնտեսական ու կուլտուրական կյանքի չափաղանց հետաքըրքական պատկերը, ցույց են տալիս մեր աճումը, մեր նվաճումները։

1897 թ. կատարվեց ցարական Ռուսաստանի բնակչության՝ ամբողջ նախահեղափոխական շրջանի միակ մարդահամարը։ Տառը տարի մշակվում ու տպվում եյին այդ մարդահամարի արդյունքները։ Թվում եր, թե ինչքա՞ն չատ հետաքրքրական բան կարելի յեր գտնել այդ մարդահամարի թվերը սպարունակող փոքրված հաստ մատյաններում։ Բայց յեթե բանանք այդ մատյանները, — մեր առաջ կպատկերանան ցարական Ռուսաստանի աղքատությունն ու անկուլտուրականությունն իրենց ամբողջ գարշելի մերկությամբ։

Ցարական Ռուսաստանում 1897 թ. 125 միլիոն բնակիչ եր չաշվվում։ Յուրաքանչյուր հինգ բնակչուց չորսն անդրագետ եր։ Ամբողջ Ռուսաստանում միայն 79 հազար ուսուցիչ կար, բայց գրա փոխարեն՝ տերտերների, վարդապետների, վանականների ու բոլոր դավանությունների պաշտամունքի մյուս սպասավորների թիվը 295 հազար եր։ Մեղանում, ԽՍՀՄ-ում 1935 թ. 752 հազար ուսուցիչ կար։ 1897 թ. ճարտարագետների ու տեխնիկների թիվն ընդամենը 4010 եր, և նրանցից միայն 4-ն եյին կին։ Իսկ մեղանում 1935 թ. վերջին միայն խոշոր արդյունաբերության մեջ 509 հազար ճարտարագետ-տեխնիկական աշխատող կար, վորոնք մի այնպիսի՝ բոլորովին նոր, աշխատավոր ինտելիլենցիա յեն ներկայացնում, «վորի նմանը չի կարելի գտնել յերկրագնդի և վոչ մի յերկրում» (ՍՏԱԼԻՆ)։ Ճարտարագետների այդ բանակեցների մեջ 66100 կին կա։ 1897 թ. ամբողջ յերկրում 16956 բժիշկ կար, վորից միայն 608 եր կին։ Դրա փոխարեն «առանց բժշկական գործունեյության իրավունքի բժշկություն անողների» (Հեքիմների) և նման անձանց թիվն եր 13095, այսինքն՝ համարյա այնքան,

վորքան բժիշկներինը : Այժմ ԽՍՀՄ-ում մենք 90 հաղարից ավելի բժիշկ ունենք, վորոնց մեծ մասը կին է :

Ուստինելի յեն նմանապես առանձին քաղաքներին վերաբերող թվերը : Մասկայում 1897 թ. միայն 374 ճարտարագետ կար . իսկ այժմ 66 հազարից ավելի ճարտարագետների . աշխատադի կա՛Տերտիկների , վանականների և պաշտամունքի մյուս սպասավորների թիվը Մոսկվայում 7638-ի եր համում , իսկ ուսուցիչների թիվը՝ 1837-ի : Այժմ ուսուցիչների թիվը Մոսկվայում 24 հազարից ավելի յե :

Սոցիալիստական մեջ հեղափոխությունից հետո ԽՍՀՄ-ում յերկու անդամ ընդհանուր մարդահամար և կատարվել — 1920 և 1926 թ. թ. :

Առաջիկա մարդահամարը ցույց կտա , թե մենք ինչպես ենք աճել 1926 թ. հետո , ստալինյան յերկու հոգածյակների ընթացքում :

ԽՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼՈՒ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ

Առաջիկա մարդահամարի ժամանակ բնակչության թիվը ակեր և հաշվել , յենելով 1937 թ. հունվարի 5-ի լույս 6-ի գիշերվա ժամի 12-ին գոյություն ունեցող գրությունից : Այդ , իհարկե , չի նշանակում , թե հաշվառուները բնակչության մուտեն լինելու դիշեր ժամանակ : Վո՞չ , նրանք աշխատելու յեն հաշվառման որը առավոտյան ժամի 8-ից ոկտած :

ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի գրանցվելու յե այն բնակչականում կամ կացարանում , վորտեղ նա անց և կացը հունվարի 5-ի լույս 6-ի գիշերը : Այդ ժամանակ ճանապարհին գտնվողները չոգենավերում , գնացքներում կամ կայարաններում են գրանցվում : Արինակ՝ հունվարի 5-ին Յերևան ժամանած , բայց շատապես ուրիշ տեղ ապրող մարդը Յերևանում և գրանցվում , թեկուղ և նա Յերևանում ընդամենը մի գիշեր յեղած լինի :

Հունվարի 5-ի լույս 6-ի գիշերն իրենց գյուղի սահմաններից դուրս գտնվող կոլտնտեսականները , այսինքն նրանք , ովքեր այդ դիշերը փայտամթերման աշխատանքներում , ջրադաշտում հերթի սղասակի կլինին , կոլտնտեսականի տանը կամ հա-

բաղատների կամ ծանոթների մաս վկչերելիս կլինին , — այնտեղ են դրանցվում , վորտեղ նրանք կդանվեն մարդահամարի մոմենտում , և վոչ թե այնտեղ , վորտեղ նրանք մշտավես ապրում են :

1936 թ. հունվարի 5-ի լույս 6-ի գիշերվա ժամի 12-ից հետո ծննդած յերեխան արդեն մարդահամարի չի յենթարկվում , իսկ նույն որը գիշերվա ժամի 12-ից հետո մեռած մարդու համար հաշվաթերթն այնպիս և կաղմվում , ինչպես կենդանի մարդու համար :

Վորքան արակ կատարվի մարդահամարը , այնքան ավելի ճշգրիտ կլինին նա : Ուստի մարդահամարն ամբողջ Միության մեջ կատարելու համար կառավարությունը մեկ որ և նշանակել , այն եւ 1937 թ. հունվարի 6-ի առավոտյան ժամի 8-ից մինչև գիշերվա ժամի 12-ը : Գնացքներում և կայարաններում մարդահամարը կատարվում և հունվարի 5-ի լույս 6-ի գիշերը :

Վոմանց կարող ե թվալ , թե հաշվառուները մարդկանց ցուցակագրելու յեն փողոցներում , տրամվայներում , թատրոններում , ակումբներում և այլն , ամեն տեղ , վորտեղ նրանք կարող են լինել գիշերվա ժամի 12-ին : Այդ իհարկե ճիշտ չի : Հաշվառուները մարդահամարը կատարելու յեն միայն բնակավայրում — խթճիթներում , բնակարաններում , հանրակացարաններում և այլն : Բայց նրանք ամեն մի խթճիթում , բնակարանում , ամեն մի տան ցուցակագրելու յեն միայն նրանց , ովքեր տալյալ քաղաքում , գյուղում կլինին հունվարի 5-ի լույս 6-ի գիշերը , անկախ այն հանդամանքից՝ նրանք գիշերվա ժամի 12-ին տանը կլինին , թե տնից դուրս , որինակ , թատրոնում , ինանությում , փողոցում , հյուրատանը , աշխատանքի վայրում և այլն :

Մինչև մարդահամարն սկսվելը , հունվարի 1-ից մինչև 5-ը , հաշվառուները շրջելու յեն բոլոր բնակելի շենքերը , կացարանները և կատարելու յեն մարդահամարի թերթերի նախնական դրանցում . հունվարի 6-ին բոլոր բնակելի շենքերն ու կացարանները նրանք նորից՝ յերկուուրեալ անդամ են շրջում , ցուցակներից ջնջում-հանում են նրանց , ովքեր այդ ժամանակամիջում մեռել կամ ուրիշ քաղաք , գյուղ են պնացել , մարդահամարի թերթիկի մեջ են մտցնում այդ ժամանակամիջոցում ծնված կամ նոր յեկած բոլոր անձանց :

Հունվարի 7-ից մինչև 11-ը բնակչության հաշվառման և ժարդահամարի թերթիկների լրացման ստուգություն և կատարվում: Դրա համար հատուկ վերահսկիչ-հրահանդիչները հաշվառուների հետ միասին, իսկ գյուղական վայրերում նաև գյուղխորհրդի ներկայացուցչի հետ միասին, նորից են շրջելու բոլոր բնակելի շենքերն ու կացարանները: Ամեն մի բնակրանում, խրճիթում, յերկաթուղարքին տոնիկում, ամեն մի բնակելի կացարանում մարդահամարի աշխատողներն այդպիսով յերեք անդամ են լինում:

Այդ նրա համար ե արվում, վորովեսղի ամբողջ բնակչությունն անխափիր ցուցակադրվի, վորովեսղի վոչ մի մարդու բաց չթողնեն, վորովեսղի յուրաքանչյուր մարդու համար մարդահամարի թերթիկը ճիշտ ու կանոնավոր կազմվի:

ԽՆՉԻ ՄԱՍԻՆ ԵՆ ՀԱՐՑՆԵԼՈՒ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ամեն մի մարդ մարդահամարի ժամանակ պատասխանելու յև մարդահամարի թերթիկի 14 հարցի: Մեր դըքույիկի վերջում կցված է այդ թերթիկի հարցերը:

Յուրաքանչյուր քաղաքացի պետք ե հարցերին ճիշտ ու կանոնավոր պատասխաներ տա: Այդ հատկապես կարեոր ե, վորովեսղում մարդահամարի ժամանակ չի թույլատրվում վորեե փաստաթուղթ հարցնել: Բոլոր պատասխանները հաշվառուները միայն բնակչության ասածների համեմատ են զրի առնում: Ով ինչպես կպատասխանի, այնպես ել հաշվառուն պարտավոր ե գրանցելու: Յերեխանների մասին նրանց ծնողներն են տեղեկություններ տալիս:

Վորովեսղի մարդահամարի թվական արդյունքները խոստորեն համապատասխաննեն իրականությանը, պետք ե բացարձակապես կանոնավոր ու ճիշտ պատասխաններ տրվեն մարդահամարի ժամանակ առաջարկված հարցերին: Ուստի ԽՍՀ Միության ամեն մի քաղաքացի պետք ե լավ յուրացնի մարդահամարի թերթիկի բոլոր հարցերի ևյությունը:

Ավելի մտնքածառնորեն կանդ առնենք այդ հարցերից մի քանիսի վրա:

Տարիքի մասին —

Թվում ե, թե մի շատ հեշտ բան ե տարիքի վերաբերյալ հարցին պատասխանելը: Բայց չե՞լ վոր այս հարցի վերաբերմամբ նախընթաց մարդահամարների ժամանակ միշտ ել շատ սխալներ են յեղել: Ամենավլասակար և, դժբախտաբար, ամենասարածված մխան այսպես կոչված՝ տարիքը կտրացնելն ե:

Հաճախ ե պատահում, որինակ, վոր յերեսունինը տարեկանները կամ նրանք, վորոնց 41 տարին արդեն լրացել ե, ասում են, թե իրենք 40 տարեկան են:

Որինակ, 1897 թ. մարդահամարի ժամանակ այսպիսի թվեր տաշվեցին:

Տղամարդ 39 տարեկան 483 հազար

Տղամարդ 40 տարեկան 1257 հազար

Տղամարդ 41 տարեկան 387 հազար

Նույն պատկերն եր ստացվել նաև հիսուն ապահովանների նկատմամբ:

Տղամարդ 49 տարեկան 300 հազար

Տղամարդ 50 տարեկան 1077 հազար

Տղամարդ 57 տարեկան 231 հազար

Իսկույն յերեսում ե, վոր շատերը «կլորացրել են» իրենց տարիքը և ասել են, վոր իրենք 40 կամ 50 տարեկան են, թեև իրոք նրանք 39 կամ 41, 49 կամ 51 տարեկան են յեղել:

Այդպիսի վիճակագրական տվյալներից ոգտվել հնարապորչների պետք ե ամեն մարդ ճիշտ կերպով ասի, թե իր քանի տարին և լրացել: Մինչև մեկ տարեկան յերեխանների համար պետք ե ասել, թե նրանց քանի ամիսն և լրացել:

ԱԶԳՈՒԹՅԱՆ ՅԵԿ ՄԱՐՑՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Այս հարցին պատասխանելիս յերբեմն շատ խոսակցություններ են ծագում: որինակ, ինչպես վարվել այն գեղօքերում, յերբ հայրը չինացի յե, իսկ մայրը՝ ոռւս և այլն:

Սակայն հարցը շատ հասարակ ձեռվ և լուծվում: Յուրաքանչյուր քաղաքացի ինքնի վորոշում իր ազգությամբ, իսկ

փոքրահասակ զավակների համար այդ հարցը նրանց ծնողներն են վորչում:

Այդպէս չեն մոտենում ազգության հարցին կապիտալիստական յերկրներում մարդահամարի ժամանակ: Կապիտալիստները մի ժողովուրդ մյուսի դեմ են դրդում, ցեղային ու ազգային տակը լություն են բորբոքում. այդ կողմից առանձնակես աչքի յեն ընկում գերմանական ֆաշիստները: Նրանք հաշվում են, թե քանի տոկոս արիական արյուն կամ այս կամ այն գերմանական քաղաքացու մեջ: Նրանք վոշարիացիներին դրկում են քաղաքացիական բոլոր իրավունքներից: Մարդահամարների ժամանակ գերմանական ֆաշիստները հետախուզում-վիճակում են, թե ավյալ մարդը վո՛ր ցեղին և պատկանում, ո՞վ ենա իր «արյունով»:

Շատերը կարծում են, վոր ազգությունն ու մայրենի լեզուն միշտ ել պետք ե զուգագիպեն, վոր դրանք միենույն բաներն են: Իհարկե, սխալ ե այդ տեսակետը: Պատահում ե, վոր մարդ մի ազգության ե պատկանում, իսկ մայրենի լեզուն, վորով նախոսում, մտածում ե, —ուրիշ ե: Որինակ, ուստի մայրենի լեզուն կարող ե ուկրայներենը լինել, իսկ հայի մայրենի լեզուն՝ թուրքերենը:

ԿՐՈՆԻ ՄԱՍԻՆ

Շատերը գեռ հիշում են, վոր հեղափոխությունից առաջ ամեն մարդ վորեւ պաշտոնական կրօնի պատկանող եր համար վում: Յեթի մարդուն ուղղափառ տերուերն եր կնքել, ապա նա ուղղափառ եր համարվում, անկախ այն բանից՝ նա աստծուն հավատում եր, թե վոչ: Իսկ վորովհետև «ուղղափառությունից հեռանալու» համար մարդկանց խիստ հետապնդում ելին, ուստի և չհամարացողը գերադասում եր իր հակակրօնական համոզմունքների մասին լոել:

Բոլորովին այլ և դրությունը մեղ մոտ, ԽԱՀՄ-ում:

Մեր սահմանադրությամբ սամեն մարդու համար առահովված է կրօնական պաշտամունքները կատարելու և հակակրօնական պրոպագանդի մղելու աղատությունը: Մարդահամարի ժամանակ

միայն մի նպատակ է դրվում — պատասխան ստանալ այն մասին, թե հարցման յենթարկվողն այժմ, ույլալ մոմենտում կրօնական համոզմունքներ ունի, թե վոչ: Զհավատացողն այդպես ել կպատասխանի, վոր նա չի հավատում: Նա, ով հավատում ե, կպատասխանի, թե ինքն իրեն ինչ կրօնի պատկանող ե համարում (ուղղափառ, մահմեղական, հուղայական և այլն):

ԱՄՈՒՍԻՆ ՈՒՆԻ, ԹԵ ՎՈՉ — Մարդահամարի ժամանակ հաշվի յե առնվում թե' արձանագրուած և թե' չարձանագրուած ամուսնությունը:

Ամուսին չունեցողները (ամուրի, այբի և բաժանված) այդ հարցին պատասխանում են «վոչ»:

ՎՈՉ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅՑԻ ՅԵ

Այս հարցը նրա համար ե տրվում, վորպեսի պարզի, թե ԽԱՀՄ-ում մյուս պետությունների վորքան քաղաքացի յե ապացում: Այս հարցին բոլոր խորհրդային քաղաքացիները պատասխանում են «խորհրդային քաղաքացի»:

Ուրիշ պետությունների քաղաքացիները մատնանշում են այն յերկրի անունը, վորի քաղաքացին են նրանք:

ԳՐԱԴԵՑԸ ՅԵ, ԹԵ ՎՈՉ

Թվում ե, թե մի պարզ հարց ե: Սակայն վոչ բոլորն են ձիշտ հասկանում այս հարցը: Որինակ, յերբեմն զրադես ե համարվում հաղիւհաղի իր ազգանունը գրող մարդը, վորը սակայն բոլորովին կարդալ չգիտե: Այդպիսի մարդուն չի կարելի գրադես համարել: Բայց յեթե մարդը կարող ե կարդալ, թեկուզ ե գանդաղ կարդալ, ապա նրան պետք ե գրադես համարել, յեթե նույնիսկ նա դեռ գրել չի կարողանում: Այս գեղքում պետք ե հիշել, վոր գրադես ե համարվում թեկուզ մի վորեւ յեզրով կարդալ գիտցող մարդը:

ՎՈՉ ԴՊԲՈՒԱԽՄՆ Ե ՍՈՎՈՐՈՒԽ-ՏԱՐԱԿԱՆ, ՄԻԶՆԱԿԱՐԳ, ԹԵ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ.

ԽԱՀ Միության բնակչության մի հակայական մասը սովորում և բարձրացնում ե իր վորակալորումը: Բայց մարդահա-

Ժարի նպատակն է պարզել, թե մենք ինչքան աշակերտ-ուսանող ունենք միայն նորմալ տիպի դպրոցներում (տարրական, թերթ-միջնակարգ, միջնակարգ դպրոցներ, բանֆակ, տեխնիկում, բՈՒՀ): Զանազան տեսակ կուրսերում, գործաշղպբոցներում (ՓՅՍ), հեռակա դպրոցներում և դպրոցական այլ հիմնարկներում սովորողներն ուսման վերաբերյալ հարցին պատասխանում են «Ուչ»:

ԱՎԱՐՏԵ՞Լ և ԱՐԴՅՈՒ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԿԱՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑ

Մարդամարը պետք է պարզի, թե մեր յերկրում վորքան քնակիչ միջնակարգ, վորքան բնակիչ բարձրագույն դպրոց են ավարտել: Պետք է նկատի ունենալ, վոր թերթ-միջնակարգ դպրոցավարտները (յոթնամյակ ավարտածները) միջնակարգ դպրոցավարտներ են համարվում:

Ցարական Ռուսաստանում զոյսություն ունեցող բազմաթիվ զանազան տիպի դպրոցներն այժմ շատ քչերն են հիշում: Այժմ յերիտասարդներից ովագայութեան իշխում է միջնական որիորդների ինստիտուտը», «թեմական դպրոցը», «հոգկորձմարանը» և այլն: Այն հարցը, թե այդպիսի դպրոցական հիմնարկը միջնակարգ դպրոց եր՝ թե բարձրագույն, —ինքը՝ հարցման յենթարկողն ե վորոշում: Հաշվառուն պետք է զրի առնի այնպես, ինչպես նրան կասեն:

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ (ՆԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ՏԵՍՍԿԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԸ

Եկը յերկրում արմատապես մոլովել են բնակչության գրաղմունքներն ու պրոֆեսիաները: Յերկրի ինդուստրացումը, զյուղատնտեսության կոլեկտիվացումն ու մեքենացումը մեծ թվով նոր գրաղմունքներ ու մասնադիտություններ են ստեղծել: Ելեկտրոյենարաններ (էլեկտրօսվարչիք), փորող մեքենաների (անձնավարներ, հանքահատ կոանով աշխատող հանքափորներ (забойщики на отбойных молотках) և այլն—այսպիսի դրա-

մունքների ծանոթ չեր նախահեղափոխական Ռուսաստանի արդյունաբերությունը, համարյա անձանոթ եր դրանց նաև խորհրդային յերկիրը 1926 թ. մարդահամարի ժամանակները: Իսկ այժմ դրանք մասսայական, տարածված պրոֆեսիաներ են: Զեռքի ծանր աշխատանքին հետ կապված շատ պրոֆեսիաներ անհնատացել կամ անհետանում են: Այլևս չկան սահնակավորներն ածխարդյունաբերության մեջ, հետզետես պակասում է գլորիչների թիվը մետաղագործության մեջ և այլն:

Հին մենատնտեսային գյուղն առհասարակ ծանոթ չեր վոչ մի պրոֆեսիայի, վոչ մի մասնադիտության: Ամեն մի գյուղացի, ինչպես ասում եյին, — «համ կար անող եր, համ հնձող, համ ել շվի փչող»: Իսկ այժմ մեր կոլտնտեսային գյուղում տրակտորատների, կոմբայնավարների, մեքենագետների, շոֆերների գաշտագործական բրիգադների բրիգադավարների, անասնաբուժական բրիգադավարների և սոցիալիստական դյուղատնտեսության վորակյալ այլ աշխատողների մասսայական կաղը եր են առաջ յեկել:

Ստալինյան յերկու հնգամյակների հերոսական տարիներում արտադրության շատ նոր խոշորագույն ճյուղեր են ստեղծված, մեծ քանակությամբ նոր գործարաններ, խորհունտեսություններ, ՄՏԿ-ներ են կառուցված: Տասնյակ հազարայիտ նոր մարդիկ են յեկել այդտեղ աշխատելու, գլխավորապես գյուղից:

Այժմ ուրիշ կերպ ե բաշխվում բնակչությունն ըստ զբաղմունքների և ըստ արտադրության ճյուղերի:

Այդ բոլոր նոր պրոֆեսիաներն ու մասնագիտությունները հաշվի առնելու համար պետք է աշխատել զբաղմունքների տեսակը՝ վորքան կարելի յե ճշտորեն զրի առնել: Յեթև մարդահամարի ժամանակ հենց միայն պատասխանեն «քանվոր» կամ «բրիգադիր» կմմ «աշակերտ»: — ապա այդպիսի պատասխանից քիչ բան դուրս կդա: Պետք ե ճշգրիտ դրել, որինակ, «իմականագործ», «դաշտային բրիգադիր», «մետաղի չարխագործի աշտկերտ» և այլն: Ծառայողը պետք է իր պաշտոնի անունն ասի— «հաշվապահ», «ուսուցիչ», «հերթափոխ ճարտարագետ», «տեխնիկ-չինարար» և այլն:

Կարեղ են այնպիսի դեպքեր պատահել, վոր այս կամ այն

քաղաքացին կարճ ժամանակով զանազան աշխատանքներ կատարի : Նա պետք է ցույց տա, թե հատկապես ի՞նչ աշխատանք է կատարելիս յեղել վերջում, պետք է վերջին աշխատանքը ցույց տա : Մի քանիմն ել կարող են, որինակ, այսպես պատասխանել—«սեադործ բանվոր» կամ «տարաբանվոր» (разнорабочий), այն հիման վրա, վոր յերեկ բեռնիչ են յեղել, նրանից առաջ՝ փայտ են ջարդել հիմանդանոցի, դպրոցի համար, իսկ դրանից ել առաջ՝ վորեև այլ աշխատանք են կատարել :

Այդպիսի պատասխան չպետք է տալ : Յեթե քաղաքացին մարդահամարի բռապելին բեռնիչ է յեղել, ապա թող հենց այդպես ել պատասխանի—«բեռնիչ» :

Ուստիմական հիմնարկներում սովորողները վորոնք միաժամանակ այլ տեղ չեն աշխատում, այդ հարցին պետք է պատասխանեն—«սովորող» : Իսկ յեթե նրանք սովորելու հետ միաժամանակ նաև աշխատում են վորեև տեղապետք է ցույց տան աշխատանքի վայրում ունեցած իրենց պաշտոնը :

Զբաղմունքի տեսակի հետ է կարպված աշխատավայրի հարցը : Վորովհետեւ մենք պետք է պարզենք, թե մեղանում քանի մարդ է աշխատում արդյունաբերության մեջ, տրանսպորտում, գյուղատնտեսության մեջ, կուլտուրական շինարարության գծով, ուստի չափաղանց կարեոր ե, վոր ամեն մի քաղաքացի ձշորեն ցույց տար, թե նա վո՞ր ձեռնարկության մեջ, վո՞ր հիմնարկում կամ կուլտնտեսությունում և աշխատում :

Ջի կարելի, որինակ, տեղել, թե աշխատում ե «գործարանում», պետք է ասել՝ թե հատկապես վո՞ր դործարանում, արդյունաբերության վո՞ր ճյուղումն է դանդում և ինչպես է կոչվում այդ դործարանը : Սիսալ ե, որինակ, այսպես պատասխանել—«աշխատում եմ «Պրոլետարի» գործարանում», կամ «Կարմիր Հոկտեմբեր» գործարանում, «Բորեց» գործարանում : Գետք է պատասխանել—«Պրոլետարի» ջուլհակաղործարանում», «Կարմիր Հոկտեմբեր» հրուշակաղործարանում», «Բորեց» մեքենաշինական գործարանում և այլն :

ՀԱՍԱՐԱԿԱՆԱՆ ՎՈՐ ԽՄԲԻՆ Ե ՊԱՏԿԱՆՈՒՄ

Մարդահամարի ժամանակ ամեն մի քաղաքացի պետք է ցույց տա, թե մարդահամարի թերթիկում թված հասարակական խմբե-

քից վորին ե պատկանում—բանվորների, ծառայողների, կոլտընտեսականների, մենատնտեսների, տնայնագործների, աղաս պրոֆեսիոնալիտերի մեր մարդկանց, թե՛ կրոնական պաշտամունքի սպարկողների անաշխատ տարրերի :

Մարդահամարի միջոցով ստացվելիք թվերը ցույց կտան մեզ, թե մեր ամբողջ բնակչությունն ինչպիսի հասարակական խմբերի յէ բաժանվում :

Այս հարցը, առաջին հայացքից, մի փոքր անորոշություն է առաջացնում ինամառուների (Այցևենց) նկատմամբ : Հասարակական վո՞ր խմբին ե պատկանում, որինակ, բանվորի կինը, վորը տնային տնտեսությամբ ե գրաղվում, կամ ինչպես գրանցել թոշակառվին կամ սովորողին : Շատ պարզ ձեռով —ինամքենամբ տակ գտնվող կնոջն ու յերեխային պետք է այն հասարակական խմբի մեջ համարել, վորին պատկանում ե նրանց կերակրող անձը. այսպես՝ բանվորի՝ տնային տնտեսությամբ դրադուղ կինը ««բանվորներ» խմբին ե պատկանում, ծառայողի ինամքի տակ ապրող նրա կինը—«ծառայողներ» խմբին և այլն :

Թոշակառուն կամ սովորողը (ուսանողը, աշակերտը) այն հասարակական խումբն է ցույց տալիս, վորին նա պատկանելիս յեղել կենսաթոշակ կամ թոշակ ստանալուց առաջ :

Որինակ, յեթե թոշակ ստացող ուսանողը ԲՈՒՀՀ մտնելուց առաջ բանվոր է յեղել, ապա նա պետք է գրանցվի վորպես բանվոր, իսկ յեթե նա ԲՈՒՀՀ մտնելուց առաջ չի աշխատել, ապա պետք է համարվի այն հասարակական խմբի մեջ, վորին պատկանել են նրա ծնողները կամ այն անձինք, վորոնց ինամքի տակ նա պարել ե :

ԱՐԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱՅՑԻՆԵՐԻ ՊԱՏՍՄԱՆՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿ
ՀԱՆԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե

Կառավարությունն արգելել է յուրաքանչյուր առանձին անձի մտուին գրանցված տեղեկությունների հրապարակ հանելը : Յեթե վորեւ հաշվառու պատմի այն, ինչ վոր քաղաքացին հաղորդել ե, որինակ, իր տարիքի, զրադմունքի, ազգության կամ կրոնի մասին, այդ հաշվառուն դատի կհանձնի :

Մարդահամար կատարելու նպատակն է նիշտ տեղիկություն-



Ան աստանալ ամբողջ յերկրի բնակչության մասին և
վոչ թե յուրաքանչյուր առանձին քաղաքացու մասին։ Ուստի և
յուրաքանչյուր քաղաքացի կարող ե վստահ լինել, վոր նրա պա-
տասխանները գաղտնի կմնան և միայն վիճակապահական հաշիվներին
ու ընդհանրացումների համար կողտադործվեն։

Ահա թե ինչ ե ասված այդ առթիվ ԽՍՀՄ կառավարության
կողմէց 1936 թ. ողոստոսին ընդունված որենքի մեջ—

«Սահմանել, վոր համամտութենական մարդահամարի ժամա-
նակ առանձին անձանց մասին հավաքվող տեղեկությունները հրա-
պարակ չպետք ե հանվեն և կարող են ոգտագործվել միայն վի-
ճակարտական մշակումների համար։

Այն հաշվառուները, վերահսկիչ-հրահանդիչները և մարդա-
համարի այլ աշխատողները, փորոնք հրապարակ կհանեն առան-
ձին անձանց վերաբերյալ տեղեկությունները, քրեական պատաս-
խանաւության կենթարկվեն ԽՍՀԽՆՀ Քրեական Որենսդրքի 109
հոդվածի և դաշնակից հանրապետությունների քրեական որենս-
դրքերի համապատասխան հոդվածների համաձայն»։

ՄԱՐԴԱԾԱՄԱՐԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԳՈՐԾ Ե

Մարդահամարը համաժողովրդական դործ ե, և նրա հաջո-
ղությունը կախված ե մեր յերկրի յուրաքանչյուր քաղաքացու
ակտիվությունից ու դիտականությունից։

Մարդահամարին ակտիվ կերպով մասնակցելը մի կարևորա-
գույն հասարակական պարտականություն է։ Ամեն մի քաղաքացի
պետք ե իմանա, վոր հունվարի 6-ին մարդահամար և կատար-
վում, և վոր այդ մարդահամարը պետք ե ապահովի ամբողջ
բնակչության նիշտ ու կանոնավոր հաշվառումը։ Թող ամեն մեկը
հետեւ, վոր իր համար մարդահամարի թերթիկ լրացվի։ Յեթե
վորեւ պատճառով հաշվառուն չի յեկել (իսկ այդպիսի գենգեր
կարող են լինել հաշվառուների անփութության պատճառով),
ապա ամեն մի քաղաքացի ինքը պետք ե հոգ տանի, վոր իրեն
զրանցեն։ Թող նա այդ մասին հայտնի մարդահամարի մոտակա-
կետին, վորպեսզի նրա համար մարդահամարի թերթիկ կաղմեն։
Չե՞ վոր յեթե յուրաքանչյուր հաշվառու թեկուղ մի մարդու չը-

20

գրանցիր թաց թողնի, ապա մարդահամարից գուրս կմնա մերի
միլիոն մարդ։ Իր մասին հոգալը գեռ քիչ ե, թող ամեն մի քաղա-
քացի ստուգի՝ արդյոք արտադրության գծով իր ընկերները, իր
ազգականները, ծանոթները գրանցված են, թե վոչ. գրանով նա-
ողնած կլինի հաշվառուներին։ Այդ անելով, նա ոգնում ե պե-
տության իսկապես ամբողջ բնակչությունը ճիշտ կերպով հաշ-
վառման յենթարկելու գործում։

Մենք մարդահամարը կատարում ենք ջախջախված գաստ-
կարդային թշնամու՝ գեռմս այստեղ-այստեղ թաղնված մնա-
գորդների կողմից։ Մրցկիստական-ֆաշիստական բանդայի
թափփուկների կողմից սոցիալիստական պետության գեմ մըղ-
վող քողարկված պայքարի պայմաններում։ Նրանք կիործեն
այս կարեռագույն պետական գործում մեղ վնասել և ստորու-
թյուններ անել մեր զեմ զանազան ճանապարհներով, որինակ,
Ֆարլահամարի իսկական նշանակությունն ու ինդիրները խեղա-
թյուրող չարամիա լուրեր տարածելով բնակչության հետամնաց
քասի մեջ։

Ամեն մի ազնիվ, Խորհրդային իշխանության գործին նվիր-
ված քաղաքացու պարտքն և մերկացնել դասակարգային թըշ-
նամու այդ պոչանքներին (ՕХՅՈՒՅԵ), բացատրել հետամնաց
ֆարկանց մարդահամարի նշանակությունն ու ինդիրները, ա-
ջակցել, վորպեսզի վոչ մի մարդ չխօսափի մարդահամարից։

Մարդահամարից ոգտվել կարող են նաև քրեական տարրերը
«հաշվառուների» անվան տակ բնակարանները մտնելով։ Պետք է
պահանջել, վոր հաշվառուն բնակարան գալով, ներկայացնի տե-
ղական խորհրդից արված վկայականը։

Մեր մարդահամարը բանվորների ու զբուղացիների՝ աշ-
խարհում առաջին սոցիալիստական պետության մարդահամարն
ե լինելու։ Նա կատարվելու յե մի յերկրում, վորի ժողովուրդ-
ները մեծագույն հնտուղիազմով լի նվիրվածությամբ դեպի իրենց
գեղեցիկ հայրենիքն ու լենինի-Ստալինի կոմունիստական կուսակ-
ցությունը, խանդակառքն ընդունեցին Ստալինյան Ստականա-
գությունը։

Մարդահամարի արդյունքներին և քենոված լինելու մեջ



յերկրի ժողովուրդների և ամբողջ աշխարհի ուշատավորների ուշագրությունը :

Ամեն ինչ անենք, վորսեազի մարդուհամարն որինակելի կերպով կատարվի, վորակեազի նրա արդյունքները բոլչելիկայն դալիք նոր հաղթանակների պլանավորման, և ունիզմի ճանապարհին մեր նորանոր նվաճումների բոլչելիկ ականավորման հիմքը կազմեն :

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԹԵՐԹԻԿԻ ՀԱՐՑԻՐԸ

1. Սեռը (արական, իդական)
2. Քանի՞ տարեկան կամ ամսակրոն ե
3. Աղջությունը
4. Մայրենի լեղուն
5. Կրոնը
6. Ամուսնացած ե, թե վոչ
7. Վո՞ր ոկտության քաղաքացի յե
8. Գրադե՞տ ե, թե վոչ
9. Վո՞ր դպրոցումն ե սովորում—տարրական, միջնակարդ, թե բարձրադառյան
10. Վո՞ր գամաղանում կամ վո՞ր կուրսում ե սովորում
11. Ավարտե՞լ ե արդյոք միջնակարդ կամ բարձրադառյան դպրոց
12. Զբանոներ տեսակը (ծառայությունը) ներկայումս
13. Այսուանը ե տեղը (ձեռնարկության, կոլտնտեսության, հիմնարկի անդամը)
14. Հասարակական վո՞ր խմբին ե պատկանում — քանիլորների, ծառայողների, կոլտնտեսականների, մենատնտեսների, տեսայնապործների խմբերին, աղատ պրոֆեսիայի մարդկանց, թե կրոնական պաշտամունքի սպասարկողների և անաշխատ տարրերին:

